ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՕԼԻՄՊԻԱԴԱՅԻ ՄԱՐԶԱՅԻՆ ՓՈՒԼԻ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ
2025-2026 ուստարի
9-րդ դասարան
(Տևողությունը՝ 3 ժամ)

Միրելի՛ բարեկամ, հուսով ենք՝ ուսումնասիրել ես «Սասունցի Դավիթ» դյուցազներգությունը: Ուշադի՛ր կարդա ընտրված այս հատվածը, որը վերապատմված է գրական հայերենով, և կատարի՛ր առաջադրանքները: Աշխատի՛ր հարցերին հիմնավորված և ըստ էության պատասխաններ տալ, անպայման օրինակնե՛ր բեր թե՛ տրված հատվածից, թե՛ դյուցազներգությունից:

ՍԱՆԱՍԱՐԻ ԵՎ ԲԱՂԴԱՍԱՐԻ ԱՄՈՒՍՆՈՒԹՅՈՒՆԸ

Ըստ «Սասունցի Դավիթ» դյուցազներգության

Երկվորյակ եղբայրների՝ Սանասարի և Բաղդասարի անունները թնդում էին աշխարհով մեկ: Մարդիկ իրար պատմում էին եղբայրների քաջագործություններից ու զարմանում, հիանում էին նրանց արարքներով:

Այս խոսք ու զրույցը գնաց հասավ Պղնձե քաղաք՝ Քաջանց թագավորի աղջկան՝ Քառսուն-Ճուղ-Ծամ Դեղձուն-Ծամին: Դեղձունը կախարդ էր. երազի մեջ տեսել էր Սանասարին և սիրահարվել էր նրան: Շատ մտածեց Դեղձուն Ծամը, շատ միտք արեց, վերջը որոշեց նամակ գրել նրան և հրավիրել իր մոտ: Ելավ այս կախարդ աղջիկը, վերցրեց երկու կուժ, մեկի մեջ ջուր լցրեց, մյուսը թողեց դատարկ: Երկու կժերի վրա էլ մեկական խնձոր դրեց: Ապա մի թուղթ գրեց. «Քաջանց թագավորի աղջիկ Դեղձուն Ծամից. շատ բարև Սանասարին, շատ բարև Բաղդասարին, Սանասարին: Սանասա՛ր տղա, ես Պղնձե քաղաքի թագավորի աղջիկն եմ: Իմ սիրտն այս դատարկ կժի պես սուրբ է, իմ գլուխն այս լիքը կժի պես լեփ-լեցուն է. Աստծո շնորհներով եմ լցված: Շատերն են եկել ինձ ուզելու. քառասուն տեղից քառասուն մարդ է եկել, բայց ես նրանց խոսք չեմ տվել: Երազումս քեզ տեսել ու սիրահարվել եմ. արի՛ ու ինձ ա՛ռ, տա՛ր քեզ համար»:

Ապա իր պատկերը դրեց նամակի մեջ, կանչեց երկու աղջկա, նամակն ու կժերը նրանց թևերին կապեց: Աղջիկներն անմիջապես աղավնիներ դարձան և թռան Սասուն:

Սանասարը չէր ուզում գնալ Դեղձունի հետևից, բայց Բաղդասարը համոզեց, որ գնա և այդ աղջկա հետ ամուսնանա: Սանասարը հեծավ Քուռկիկ Ջալալին և եղբորն ասաց.

-Եթե երեք օրից չեկա, իմացի՛ր, որ նեղության մեջ եմ, կգաս ինձ օգնության:

Եղբայրներն իրար համբուրեցին, մատանիները փոխանակեցին, Սանասարը մոր օրհնությունն առավ ու ճամփա ընկավ դեպի Պղնձե քաղաք:

Սանասարը քառասուն օրվա ճանապարհը մեկ օրում անցավ, հասավ Քաջանց թագավորի հողին, ելավ Պղնձե քաղաքի դիմաց, տեսավ քաղաքի պարսպի տակ քառասուն ծերունի են նստած՝ երկար մորուքներով, հոգնած ու անզոր:

-Բարև ձեզ, մե՛ծ մարդիկ, սպիտակամորուս, կարմրամորուս, թուխմորո՛ւս փահլևաններ:

Այդ մարդիկ ասացին.

-Հե՛յ-վա՛խ, կանա՛չ կտրիճ, վաղը դու էլ կլինես մեր օրին:

-Ինչո՞ւ, ի՞նչ է պատահել, որ դուք այդ օրն եք ընկել:

-Կախարդ աղջիկը մի հավք ունի. դա գալիս, պատի վրա կանգնում ու ճչում է: Դրանից ենք մենք էսպես ծերունիներ դարձել:

Սանասարը խելացի էր. պատի տակ չնստեց, այլ իր ձին քշեց գնաց քաղաքից հեռու:

Հենց մթնեց, եկավ քաղաքի պարսպի մոտ, Քուռկիկ Ջալալու սանձը ոլորեց, ասպանդակեց, թռավ անցավ բարձր պարիսպն ու մտավ քաղաք:

Քաղաքում շատ ման եկավ, վերջը մի հայի իջևանատուն գտավ, ձիուց իջավ, հաց կերավ, գիշերը մնաց այդ հայի մոտ: Ծերունի իջևանատերը պատմեց, որ այդ քաղաքի թագավորի աղջիկը կախարդուհի է,

որ լավ կլինի՝ Սանասարը նրա հետ գործ չունենա, որովհետև ափսոս է, կկորչի, կգնա այդ կախարդուհու պատճառով:

-Չէ՛, պապի՛կ, ես նրա հետ գործ չունեմ: Բայց ինձ ասա՛, թե ո՛րն է նրա գաղտնիքը:

-Նրա կախարդանքի ուժը ծովում է, վիշապի բերանում թաքցրած մի ակ է: Ով որ մտնի ծով, էն վիշապի բերանից ակը հանի, հետո առավոտ վաղ ելնի և Դեղձուն աղջկան իր սենյակի մեջ մերկ տեսնի, կախարդանքն էլ կվերանա, էն կկարողանա աղջիկն առնել և տանել:

-Պապի՛կ, էս ի՞նչ լույս է, որ էդպես վառ լուսավորում է չորսբոլորը:

-Որդի՛, դա ոսկի խնձոր է, որ էդ աղջիկն իր դարպասի վրա ամրացրել է, իսկ աշտարակի գլխին էլ մի գուրզ է դրել: Ով որ կարողացավ էն խնձորն ու գուրզը վար բերել, վիշապի բերանից էլ ակը հանել, կարող է ամուսնանալ աղջկա հետ:

Պառկեցին քնելու: Ծերունին քնեց, իսկ Սանասարի քունը չէր տանում: Նա տեղից զգույշ ելավ, գնաց, թամբեց Քուռկիկ Ջալալին, քշեց, ձին տաքացրեց, թռավ, իջեցրեց ոսկե խնձորը և դրեց ծոցը: Հետո մի անգամ էլ ձին քշեց, ասպանդակեց, թռավ, աշտարակի գլխից գուրզն իջեցրեց:

Դրանից հետո սուրաց դեպի ծով, մտավ, գտավ վիշապին, գուրզով գլխին խփեց, երախից ակը դուրս թռավ: Ծովը կատաղեց, փոթորիկ եղավ, ջուրը ելավ, քաղաքը լցվեց:

Դրանից հետո Սանասարը վերադարձավ, պառկեց ծերունու կողքին և քնեց մինչև լույս:

Առավոտյան թագավորի մունետիկներն ընկան քաղաքով մեկ, որ գտնեն այն օտարականին, որ իջեցրել է ոսկե խնձորն ու գուրզը, վիշապի բերանից էլ հանել է կախարդական ակը:

Թագավորի մարդիկ եկան, գտան Սանասարին և հաղորդեցին, որ թագավորն ուզում է տեսնել, թե ինչպես է նա իջեցրել խնձորը: Սանասարը ելավ եկավ թագավորի առաջ, ապա Քուռկիկ Ջալալին քշեց, ձին տաքացրեց, թռավ, ոսկե խնձորը դրեց դարպասի վերևում, մի անգամ էլ ձին տաքացրեց, թռավ, գուրզը դրեց աշտարակի գլխին:

-Լավ, - ասաց թագավորը,- դու կտրիճ մարդ ես: Երեք փորձություն անցել ես: Հիմա էլ պիտի իմ քառասուն փահլևանների հետ կռվես:

-Բոլորին միասին հանի՛ր իմ դեմ, ես ժամանակ չունեմ:

Թագավորի հրամանով քառասուն կտրիճներին հանեցին Սանասարի դեմ: Սանասարը Աստված կանչեց, վրա ընկավ, սկսեց դրանց ջարդել: Մինչև իրիկուն կռվեցին, քսան փահլևանի սպանեց, դիակներն ընկան չորսբոլոր, Սանասարի թևը թուլացավ, շրջանի կենտրոնում կանգնած՝ միայն ինքն իրեն էր պաշտպանում:

Այդ առավոտ Բաղդասարը ելավ, տեսավ եղբոր մատանին սևացել է: Թռավ հեծավ իր ձին ու սուրաց եղբորն օգնության: Գնաց հասավ, էն քսան փահլևանին էլ ինքը սպանեց:

Հետո Քաջանց թագավորը երկու եղբորն ուղարկեց Կանաչ քաղաք: Այստեղ նրանք սպանեցին աղբյուրի ակը փակող վիշապին, թագավորի աղջկան փրկեցին:

Բաղդասարը նշանվեց այդ աղջկա հետ: Նորից ելան եկան Քաջանց թագավորի մոտ, առան Դեղձուն-Ծամին: Սանասարը Դեղձունին ասաց.

-Պարսպի տակ նստած էս մարդկանց կախարդանքից ազատի՛ր, որ գնանք:

-Բայց դրանք ինձ համար էին եկել, որ ազատեմ, կելնեն, հետդ կռիվ կանեն:

-Ոչինչ, թող կռվեն. դու սրանց ազատի՛ր:

Դեղձուն-Ծամը կանչեց կախարդական թռչունին, սա կանգնեց պարսպի վրա, մի զիլ ճիչ արձակեց, բոլոր փեսացուները նորից դարձան ջահել-ջիվան մարդիկ:

-Ա՛յ պանդուխտ ախպերներ, դուք հոժա՞ր եք, որ ես էս աղջկան տանեմ, նրա հետ կյանք վայելեմ,- հարցրեց Սանասարը:

Փեսացուներն ասացին.

-Տա՛ր, բարով վայելես, շնորհավոր լինի:

Հետո իրար մնաս բարով ասին, ելան գնացին իրենց երկրները:

Երկու եղբայրներն էլ լուր ուղարկեցին Ծովինար խանումին, որ պատրաստություն տեսնի, փող ու թմբուկ, գուսաններ պատրաստի, որ գան հարսանիք անեն:

Եկան, քառասուն օր, քառասուն գիշեր հարսանիք արին, Սանասարին ամուսնացրին Դեղձուն-Ծամի, իսկ Բաղդասարին՝ նրա քրոջ՝ Կանաչ քաղաքում վիշապից փրկած աղջկա հետ:

***

1. Համաձա՞յն ես, որ «Սասունցի Դավիթ»-ը բանահյուսական ստեղծագործություն է: Ի՞նչ փաստեր կան այդպես մտածելու համար: 2 մ.
2. Կարո՞ղ ես դյուցազներգությունից հիշել՝ Դեղձուն-Ծամի բանբեր աղավնիների՝ Սասուն գալուց հետո ինչ միջադեպ եղավ, Բաղդասարն ինչո՛ւ նեղացավ և խռովեց: 2 մ.
3. Ո՞ր փաստերն են հուշում, որ Սանասարն ու Բաղդասարը լավ եղբայրներ են. օրինակնե՛ր բեր նաև դյուցազներգության այլ հատվածներից: 3 մ.
4. Ինչո՞ւ Դեղձուն-Ծամը իր նամակի հետ 2 կուժ դրեց: Ի՞նչ նշանակություն ունեին դատարկ և լիքը կժերը, ի՞նչ էին խորհրդանշում: 3 մ.
5. Ի՞նչ է խորհրդանշում խնձորը. ինչո՞ւ Դեղձուն-Ծամը խնձորով ծածկեց կժերի բերանները: Այս հատվածում խնձորի մասին հիշատակություն կա՞: Գտի՛ր և վերարտադրի՛ր այդ հատվածը քո բառերով: Հիշի՛ր, թե էլ որ ստեղծագործություններում ես հանդիպել *խնձորի* խորհրդանիշին: 10 մ.
6. Ի՞նչ հատկանիշներ են բնորոշ Սանասարին: Ապացուցնե՛ր բեր թե՛ այս հատվածից, թե՛ դյուցազներգությունից: 10 մ.
7. Կարո՞ղ ես հիմնավորել Դեղձուն-Ծամի արարքը՝ Սանասարին նամակ գրելը. ի՞նչ կարծիք ունես այս մասին: 10 մ.
8. Պատկերացրո՛ւ, որ մինչև Դեղձուն-Ծամի մոտ գնալը Սանասարը պատասխան նամակ է գրում կախարդուհի արքայադստերը: Հորինի՛ր այդ նամակը Սանասարի անունից՝ ուղղված Դեղձուն-Ծամին: 10 մ.

Ընդամենը՝ 50 միավոր:

Միավոր չի տրվում հետևյալ դեպքերում.

- Պատասխանն ամբողջությամբ վերաշարադրանք է:
- Գաղափարը չի բխում տրված նյութից:

Միավոր է հանվում, երբ առկա են.

- ուղղագրական, կետադրական, քերականական սխալներ (1 միավոր՝ յուրաքանչյուր սխալի համար),
- բառագործածության ու շարադասական սխալներ (1 միավոր՝ յուրաքանչյուր սխալի համար),
- մտքի ձևակերպման սխալներ (2 միավոր՝ յուրաքանչյուր սխալի համար),
- հարակից սխալներ (1 միավոր՝ յուրաքանչյուր սխալի համար):

Հանրապետական հանձնաժողովի նախագահ՝ Հասմիկ Հովհաննիսյան